# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է Արթիկ համայնքի ղեկավար՝ Անանիկ Ոսկանյանը:

Նիստին ներկա էին ավագանու 16 /տասնվեց/ անդամներ, բացակայում էին ավագանու 11 /տասնմեկ/ անդամներ:

Նիստին մասնակցում են Արթիկ համայնքի ավագանու 16 /տասնվեց/ անդամներ՝ Անանիկ Ոսկանյանը, Գայանե Սալնազարյանը, Արմինե Աղրամանյանը, Էմիլ Գևորգյանը, Վարդուհի Հովհաննիսյանը, Գոռ Պետրոյանը, Աստղիկ Պետրոսյանը, Արտակ Հարությունյանը, Արման Տոնոյանը, Նարինա Վարդանյանը, Հովհաննես Սահակյանը, Լիլիթ Հաջաթյանը, Գայանե Մինասյանը, Մուշեղ Մկրտչյանը, Մեսրոպ Վարագյանը, Ժաննա Ասատրյանը:

Նիստին ներկա էին համայնքի ղեկավարի տեղակալներ Վարդան Մակեյանը և Արման Աջամօղլյանը, աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը, համայնքի ղեկավարի օգնական Սևակ Պետոյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Էմմա Յայլոյանը, աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Արկադի Թադևոսյանը, զարգացման, ծրագրերի, տուրիզմի և արտաքին կապերի բաժնի պետ Մովսես Մովսիսյանը, կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի պետ Մարինե Թադևոսյանը և այլ աշխատակիցներ:

Նիստի օրակարգ ներկայացնելուց հետո հետևյալ օրակարգը դրվեց քվեարկության և հաստատվեց:

## ՕՐԱԿԱՐԳ

**Հաստատել նիստի հետևյալ օրակարգը**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 172-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   /զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2024 թվականի բյուջեի կրթություն /այլ դասերին չպատկանող/ բաժնում նախատեսված գումարից հատկացումներ կատարելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն բնակավայրի բնակիչ Գարիկ Միքայելի Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող SUBARU մակնիշի 34FD730 հաշվառման համարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում 2023թվականի դեկտեմբեր ամսին իրականացված իրավական հսկողության արդյունքների մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող թվով երկու KAMAZ 53605-48 (A5) մակնիշի 799 CX 61 և 800 CX 61 հաշվառման համարանիշերով ինքնաթափ բեռնատարները անհատույց օգտագործման իրավունքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

**7.** Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>>թիվ 160-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի թվով 12 համայնքների սեփականություն հանդիսացող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականություն փոխանցելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 160-Ա որոշման 33 հավելվածում փոփոխություն կատարելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Արթիկ համայնքի գլխավոր հատակագծերի նախագծերը (գոտևորման նախագծերը) հաստատելու մասին:

/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (16)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Սալնազարյան Գայանե | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Պետրոսյան Գոռ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Վարդանյան Նարինե | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Հաջարյան Լիլիթ | | |
| Մինասյան Գայանե | | |

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 1-3 հարցերը ներկայացրեց համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Էմմա Յայլոյանը: Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ Է.Յայլոյանը ներկայացրեց հետևյալ բովանդակությամբ հարց.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ 172-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

1. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում՝ եկամուտների գծով՝ «2,627,924.0» թիվը փոխարինել «2,632,642.600» թվով:

2. Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում՝ ծախսերի գծով՝ «2,627,924.0» թիվը փոխարինել «2,928,445.324» թվով:

3. Որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում՝ դեֆիցիտի (պակասուրդի) գծով՝ «0» թիվը փոխարինել «295,802.724» թվով:

Ելնելով նշված փոփոխություններից, առաջարկվում է համայնքի 2024 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերում նույնպես կատարել համապատասխան փոփոխություններ: Այդ փոփոխությունները պայմանավորված են նախնական հաշվարկների փոփոխություններով: Ավագանու անդամների հարցերին պատասխանելուց հետո, նշված նախագիծը դրվեց քվեարկության և ընդունվեց 16 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (16)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Սալնազարյան Գայանե | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Պետրոսյան Գոռ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Վարդանյան Նարինա | | |
| Սահակյան Հովհաննես | | |

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ Է.Յայլոյանը ներկայացրեց հարց հետևյալ բովանդակությամբ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2024 թվականի բյուջեի կրթություն /այլ դասերին չպատկանող/ բաժնում նախատեսված գումարից հատկացումներ կատարելու մասին: Հարցը ներկայացնողի պարզաբանմամբ խոսքը վերաբերում է Արթիկ համայնքի բոլոր դպրոցների թվով 27 աշակերտի և 1 պատասխանատուի որպես խրախուսման միջոց Դուբայ քաղաք շրջագայության մեկնելու համար գումար տրամադրելու մասին: Հարցի վերաբերյալ բացատրություն տվեց համայնքի ղեկավար Ա.Ոսկանյանը, նշելով որ նշված որոշումը ծնվել է <<Հակոբյան>> հիմնադրամ կազմակերպության առաջարկությամբ և ՀՀ Շիրակի մարզպետի միջնորդությամբ: Արթիկի համայնքապետարանի կողմից փոխանցվում է ընդհանուր ծրագրային գումարի 50%-ը, մյուս 50%-ը ապահովում է <<Հակոբյաններ համահայկական մշակութային կենտրոն>> հասարակական կազմակերպությունը: Նախատեսվում է լավագույն աշակերտների շրջագայության համար Արթիկ համայնքի բյուջեից փոխանցել 7799232/ յոթ միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար երկու հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ: Քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց՝ 16 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (16)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Սալնազարյան Գայանե

Աղամանյան Արմինե

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Պետրոսյան Գոռ

Պետրոսյան Աստղիկ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինե

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ Է.Յայլոյանը ներկայացրեց որոշման նախագիծ հետևյալ բովանդակությամբ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Պեմզաշեն բնակավայրի բնակիչ Գարիկ Միքայելի Միքայելյանին սեփականության իրավունքով պատկանող SUBARU մակնիշի 34FD730 հաշվառման համարանիշով փոխադրամիջոցի գույքահարկի գծով արտոնություն սահմանելու մասին: Բացատրություն տալով տվյալ հարցի վերաբերյալ Է.Յայլոյանը նշեց, որ Պեմզաշեն բնակավայրի բնակիչ Գարիկ Միքայելի Միքայելյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող փոխադրամիջոցի գույքահարկի գծով 2015-2020 թվականների համար ունի 150.000/մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամի պարտք, որը չի կարող մարել և խնդրել է իր հարցը պարտադիր ներկայացնել համայնքի ավագանու քննարկմանը:Ավագանու նիստի ժամանակ ավագանու անդամները միահամուռ ձևով դեմ արտահայտվեցին նշված բնակչին զեղչ տրամադրելուն, քանի որ նա չունի որևէ արտոնություն, առավելություն, նմանատիպ դեպքերը Արթիկ համայնքում բազմաթիվ են, ուստի հնարավոր չէ որևէ արտոնություն կիրառել և չստեղծել սխալ նախատիպ:

Քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և չընդունվեց՝ 0 կողմ, դեմ՝ 15, ձեռնպահ՝ 1 ձայների հարաբերակցությամբ: Որոշումը չի ընդունվել:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (0)** | **Դեմ (15)** | **Ձեռնպահ (1)** |
|---|---|---|
| | Ոսկանյան Անանիկ | Տոնոյան Արման |
| | Սալնազարյան Գայանե | |
| | Աղրամանյան Արմինե | |
| | Գևորգյան Էմիլ | |
| | Հովհաննիսյան Վարդուհի | |
| | Պետրոսյան Գոռ | |
| | Պետրոսյան Աստղիկ | |
| | Հարությունյան Արտակ | |
| | Վարդանյան Նարինե | |
| | Սահակյան Հովհաննես | |

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Սուքիասյանը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում 2023 թվականի դեկտեմբեր ամսին իրականացված իրավական հսկողության արդյունքների մասին: Ա.Սուքիասյանի ներկայացմամբ նշված ժամկետում իրականացված իրավական հսկողության արդյունքների մասին: Ա.Սուքիասյանի ներկայացմամբ նշված ժամանակահատվածում ՀՀ Շիրակի մարզպետարանի բաժինների կողմից ուսումնասիրություններ են կատարվել Արթիկի համայնքապետարանում՝ իրավական հսկողություն իրականացնելու նպատակով: Ուսումնասիրությունների արդյունքում չեն արձանագրվել էական թերություններ և խախտումներ, արձանագրված մի շարք վրիպումներ կարգավորվել են 2024 թվականի հունվար ամսին: Կազմված որոշման նախագծով առաջարկվում է կազմված աստուգման արձանագրության մեջ նշված խախտումներն ընդունել ի գիտություն և առաջարկվել է Արթիկ համայքնի ղեկավար Անանիկ Ոսկանյանին՝ միջոցներ ձեռնարկել համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքների արձանագրված խախտումներն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում վերացնելու, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ: Քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց՝ 16 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (16)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Սալնազարյան Գայանե | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Պետրոսյան Գոռ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Վարդանյան Նարինա | | |

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 5-րդ հարցը նույնպես ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Սուքիասյանը: Հարցի բովանդակությունն է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:Հարցի վերաբերյալ բացատրություն տալով Ա.Սուքիասյանը նշեց, որ տարեկան աշխատանքային պլանը հանդիսանում է համայքնի հնգամյա պլանի մի մասը: Աշխատանքային պլանի նմուշը տրամադրվել է ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի կողմից և ընդգրկում է այն փաստաթղթային պահանջները, որոնք սահմանվել են նշված զարգացման պլանով: Ընդհանուր տարեկան պլանը կազմվել է յուրաքանչյուր բաժնի կողմից ներկայացված աշխատանքային պլանների հիման վրա, սուբվենցիոն ծրագրերի իրականացման նպատակով: Ավագանու անդամների կողմից հարցեր ուղղվեցին հարցը ներկայացնողին, որին պատասխանեցին նաև համայնքի ղեկավար Ա.Ոսկանյանը, աշխատակազմի քարտուղար Ա.Սուքիասյանը, համայնքի ղեկավարի տեղակալները:Համայնքի ղեկավարը նշեց, որ ինչքան բարձր տոկոսով կատարվեն սեփական եկամուտները, այնքան շատ աջակցություն կլինի կառավարության, պետական վերադաս օղակների կողմից, ավելի շատ սուբվենցիոն ծրագրեր կիրականացվեն համայքնում: Քննարկունից հետո որոշվեց՝ հաստատել ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը համաձայն հավելվածի: Կողմ ՝ 16 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (16)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Սալնազարյան Գայանե

Աղրամանյան Արմինե

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Պետրոսյան Գոռ

Պետրոսյան Աստղիկ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 6-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի գլխավոր մասնագետ-իրավաբան Տաթևիկ Աղաքարյանը, այն է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող թվով երկու KAMAZ 53605-48 (A5) մակնիշի 799 CX 61 և 800 CX 61 հաշվառման համարանիշերով ինքնաթափ բեռնատարները անհատույց օգտագործման իրավունքով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու մասին: Այդ հարցի կապակցությամբ արտահայտվելով համայքնի ղեկավար Ա.Ոսկանյանը նշեց, որ ընդլայնվեղ ծրագրերի, համայքնում կատարվելիք բազմազան աշխատանքներն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է մշտապես հզորացնել <<Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում >> ՀՈԱԿ-ը՝ հատկացնել տեխնիկական միջոցներ, իսկ վերջին շրջանում ստացված տեխնիկաները աշխատում են արդյունավետ և իրենց արդարացնում են: Քննարկման արդյունքում որոշվեց՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող թվով երկու KAMAZ 53605-48 (A5) մակնիշի 799 CX 61 և 800 CX 61 հաշվառման համարանիշերով ինքնաթափ բեռնատարները անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված բեռնատարները հանել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի հաշվեկշռից և հաշվառել Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի «Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեկշռում:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (16)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Սալնազարյան Գայանե

Աղրամանյան Արմինե

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Պետրոսյան Գոռ

Պետրոսյան Աստղիկ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 7-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի պետ Մարինե Թադևոսյանը, ներկայացնելով որոշման նախագիծ Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Արթիկի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 160-Ա որոշման թիվ 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 16, 18, 23 հավելվածներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին: Մ. Թադևոսյանի բացատրությամբ խոսքը վերաբերում է

1/Արթիկ համայքնի Նոր Կյանք և Սպանդարյան գյուղերում ֆուտբոլի մասնագետների 0.5-ական հաստիքներ ավելացնելուն

2/Տուֆաշեն գյուղի մշակույթի տանը պատասխանատուի մեկ հաստիքի ավելացմանը

3/Արթիկ համայնքի Փանիկ, Գեղանիստ, Հառիճ, Նոր Կյանք, Լեռնակերտ, Սարատակ, Սպանդարյան, Անուշավան, Պեմզաշեն, Հոռոմ գյուղերի նախադպրոցական ուսումնական հաստատությունների հաստիքների մեջ ֆիզկուլտուրայի հրահանգչի հաստիքներ ավելացնելուն: Ըստ այդ կատարված առաջարկությունների անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել համայքնի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 21-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Արթիկի համայնքապետարանի

ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 160-Ա որոշման թիվ 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 16, 18, 23 հավելվածների համապատասխան ֆինանսական հաստիքների, դրույքաչափերի և աշխատավարձերի չափերի մեջ: Քննարկումից հետո առաջարկված որոշման նախագիծը դրվեց քվեարկության և ընդունվեց ՝ 16 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (16)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ
Սալնազարյան Գայանե
Աղրամանյան Արմինե
Գևորգյան Էմիլ
Հովհաննիսյան Վարդուհի
Պետրոսյան Գոռ
Պետրոսյան Աստղիկ
Հարությունյան Արտակ
Տոնոյան Արման
Վարդանյան Նարինա
Սահակյան Հովհաննես
Հաջթյան Լիլիթ
Մինասյան Գայանե
Մկրտչյան Մուշեղ
Վարագյան Մեսրոպ
Ասատրյան Ժաննա

Օրակարգի 8-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ա.Սուքիասյանը: Այն է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի թվով 12 համայնքերի սեփականություն հանդիսացող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետական սեփականություն փոխանցելու մասին: Ա.Սուքիասյանի ներկայացմամբ խոսքը վերաբերում է մինչև Արթիկ խոշորացված համայնքի ձևավորումը թվով 12 գյուղերի նախորդ թվականների արխիվ չհանձված փաստաթղթերի արխիվացման վերաբերյալ որոշմանը: Նշված գյուղական համայնքներն են՝ Հոռոմ, Հովտաշեն, Մեղրաշեն, Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Նահապետավան, Սարալանջ, Սարատակ, Սպանդարյան, Վարդաքար, Տուֆաշեն, Գետափ գյուղերի 1996-2021 թվականների

մի շարք փաստաթղթեր: Քննարկումից հետո նախագիծը դրվեց քվեարկության և ընդունվեց՝ 16 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (16)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Սալնազարյան Գայանե

Աղրամանյան Արմինե

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Պետրոսյան Գոռ

Պետրոսյան Աստղիկ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Հաջաթյան Լիլիթ

Մինասյան Գայանե

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 9-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի գլխավոր մասնագետ-իրավաբան Տաթևիկ Աղաքարյանը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 160-Ա որոշման թիվ 33 հավելվածում փոփոխություն կատարելու մասին: Տ.Աղաքարյանի ներկայացմամբ խոսքը վերաբերում է << Արթիկի համայնքային տնտեսության սպասարկում>> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակի մեջ վարորդի 2 հաստիքների ավելացման մասին, որոնք պետք է աշխատեն որպես նշված ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման հանձնած երկու ինքնաթափ բեռնատարների վարորդներ: Դրանով պայմանավորված առաջարկվում է, որոշման նախագիծ, համապատասխան նախկին որոշման հավելվածում կատարել փոփոխություններ՝ ավելացնելով 2 դրույք, 2 հաստիք, աշխատավարձի գումարի չափը ավելացնել 2 հաստիքների աշխատավարձերի չափով, աշխատողների ընդհանուր քանակը ավելացնել երկուսով:

Քննարկումից հետո նշված նախագիծը դրվել է քվեարկության և ընդունվել է 16 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (16)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Սալնազարյան Գայանե | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Պետրոսյան Գոռ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Վարդանյան Նարինա | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Հաջաթյան Լիլիթ | | |
| Մինասյան Գայանե | | |
| Մկրտչյան Մուշեղ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |
| Ասատրյան Ժաննա | | |

Օրակարգի 10-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Արկադի Գրիգորյանը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Շիրակ 9, Շիրակ 10 և Շիրակ 11 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի արթիկ համայնքի գլխավոր հատակագծերի նախագծերը (գոտևորման նախագծերը) հաստատելու մասին: Քննարկումից և հարց ու պատասխանից հետո առաջարկվեց նախագծի հետևյալ կետեր՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակ 9, Շիրակ 10 և Շիրակ 11 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Արթիկ համայնքի գլխավոր հատակագծերի նախագծերը (գոտևորման նախագծերը) համաձայն հավելվածների:

2.Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված համաձայն օրենքի պահանջի:

3.Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և <<Քաղաքաշինության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում: Քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց՝ 16 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (16)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Սալնազարյան Գայանե | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Պետրոսյան Գոռ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Վարդանյան Նարինե | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Հաջաթյան Լիլիթ | | |
| Մինասյան Գայանե | | |
| Մկրտչյան Մուշեղ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |
| Ասատրյան Ժաննա | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնքի ղեկավար

31 հունվարի 2024 թվական